

— Պէտք չկայ հրամանի.... այլ ևս բժշկապետը ինծի չի նեղանար.... Գրուած է... հոն, Թուղթին վրայ գրուած է իմ դատապարտութիւնս....:

Կրօնաւորութիւն՝ կսկիծէն քար կտրեցաւ:

Եւ Գառլօ Պիանքէշդի Տեղակալը եւաւ պարտէջ:

Փայլուն աչքերուն դիմաց, ստէպ ստէպ կարծես սև շղարշներ կը քաշուէին: Սակայն դեռ կրնար տեսնել գեղեցկերանգ ծաղիկներ՝ որոնց հետ կարծես կը խօսէր, կարծես հրաժեշտի ողջոյն կու տար:

Յառաջեց դէպ ի պարտէջի դուռը. դիտեց պողոտան, և կարծես երթեկեկող բազմութենէն վշտահար՝ ներս քաշուեցաւ:

Մօտեցաւ հիւանդանոցի մուտքին ալ և ծախը ծածանող դրօշներուն: Համբուրեց Կարմիր խաչը, մարգրիտ արտասուքներ հոն դրոշմելով: Գուրգուրանքով ու դողշուքով մօտեցաւ, գրկեց Ազգային Երազայնը, համբուրեց ու համբուրեց....:

Երբորտ ցայլերը ուղղեց դէպ ի Եկեղեցեակը. համակամութեան անուշ՝ միանգամայն երկիւղած ժպիտով՝ խորանին առջեւ ծունկի եկաւ և խոնարհեցուց ափերուն մէջ առած զլուսը: Աղօթեց, երկար առան աղօթեց:

Ու երբ դարձաւ անկողին, դրացիները զինքը հանդարտ և անդորրացած տեսան:

Պատրաստ էր վերջին հարուածը ընդունելու:

*
**

Սեպտեմբերի պայծառ առաւօտ մ'էլ՝ երբ տեղակալ Պիանքէշդի շուրջը աղմուկներ լսելով՝ և զգալով որ գլխովն արդէ փախչելու չէ, որ դէպ ի իրեն կու գայ, ըսաւ.

— Քոյր, այսօր որքան լուսնալը կ'ուշանայ:

—
Հասկցաւ թէ լուսամուտները բաց էին, և զով քամին իր այտերը կը փափփայէր, եւ սակայն այլ ևս արեւու ճառագայթ-

ները իր աչքերուն ցանցատեսակին վրայ չէին ներգործեր:

Խառախուրդները զինքը բոլորովին կուրցուցած էր:

Արտասուքի գողտր մարգարիտներ այն մարած բիրբէն դուրս ծորեցան:

Պիանքէշդի Թաշկինակով իսկոյն սլորեց զանոնք, և միշտ քրիստոնէաբար ապրած քաջարի զօրականը մըմնջեց.

— Տէր իմ և Աստուած, օրհնեալ ըլլայ Գուրգուրը: Աշխարհիս Լոյսը խաւարեցաւ ինձ համար, յաւիտենական երանաւէտ Լոյսիդ գիտ արժանի ըրէ՛:

Թրք. Ն. Ն.

ԲՈՅՍԵՐՈՒ

ԱՆԳԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քոյսերն ալ անգլուներն կ'ընեն. — Կր հարցնէ՛ Leonard Bastin, Նիւ - Եօքսի Scientific American Թերթին մէջ:

Եթէ անգրոսթիւն՝ չարիք գործծոյ կամք ունենալէ առաջ կու գայ, այն ատեն պէտք է նախ և առաջ ապացուցանել որ՝ բոյսերը իրենց գործատնութեանց վրայ գիտակցութիւն ունին: Իսկ եթէ անգրոսթիւն պէտք է արգասիքներէ դատուիլ, այն ատեն պէտք է խոստովանիլ որ բոյսերը բաւական մեծ անգթութիւններ կը գործեն:

Ջանազան տեսակ բոյսեր կան՝ որոնք միջատներ կ'որսան և անոնցմով կը սնանին: Սոյն միջատորսակ բոյսերը իրենց Թակարդին մէջ քաշած զոհերը դժնդակ մահուան կը դատապարտեն: — Ջանազան օրինակներ:

Քալիֆորնիական *Darlingtonia* բոյսը՝ խողովակած և երկայն որոգայթներուն ներքին կողերէն մեղրանիւթ կը ծորեցնէ՝ ճանճեր ներս քաշելու համար: Ճանճը կամ որ և է փոքր միջատը, դիւրաւ ներս կը մտնէ բայց բնաւ դուրս չէնէր: Թակարդին զագաթը գտնուած զանազան կէտերը

լուսոյ թափանցիկ են, պատուհանիկներու կը նմանին: Ծրուակի մէջ ինկած միջատը ժամերով կը տագնապի, կը չարչարուի, կ'ուզէ այդ պատուհանիկներէն դուրս ելլել և սակայն չի յաջողիր: Վերջապէս ուժը կը սպառի, կը գլորի խողովակին յատակը ժողովուած հեղանիւթին մէջ՝ ուր կը խղզուի:

Dionea (Ֆր. Dionea = Քլն. Դիոնէ. այլը Դիոնէ Ճանճորսակ) հիւսիսային Ամերիկայի փոքրիկ բոյսը՝ տեւողներուն ծայրը թանձր և թաւամազ յաւելուածային մասեր ունի՝ որոնք այնքան դիւրագրգիռ են՝ որ երբ անոնց վրայ միջատ մը հանգչի՝ իսկոյն կը կծկին, կը ճանկեն միջատին ոտքերը և մարմինը՝ և որքան միջատը ճիգեր թափէ ազատելու համար՝ այնքան աւելի դժնդակ պրկուեալներու կ'ենթարկուի:


Geum՝ հասարակ բոյսը որուն հայերէն Մարեմիտա անունը կը տրուի և վարդագգիներու ցեղին կը պատկանի ու 40էն 80 հարիւրորդամեղ բարձրութեան կը հասնի, իր դեղին ծաղիկները թափելէն վերջ պտուղին սերմնափակերու չոր և զնգած և համախմբութեան փոքր ծայրերը, սուր և կարթած և դէպ ի վեր դարձած կ'ըլլան, երբ միջատներ կամ ճանճոր վրանին նստին՝ իսկոյն թաթերէն կը բռնուին և այլ ևս չեն կրնար ազատիլ թէ և ամէն ճիգերնին կը թափեն: Այս Մարեմիտորը՝ անօգուտ դժնդակութեան կ'ենթարկէ խեղճ միջատները՝ քանի որ իրեն անդեան չի ծառայեցներ:

Շատ անգամ հունտերու սերմնացանու թիւնը նմանօրինակ խժոժութիւններով տեղի կ'ունենան: Օրինակներ:

Հարաւային Ամերիկայի մէջ բոյս մը կայ՝ խոշոր ճանկերով զինուած: Այդ ճանկերը երբեմն մինչև 10 հարիւրորդամեղը երկայն ըլլալով՝ երբ իրենց մօտէն անցնող կենդանի մը բռնեն՝ կը միտուին անգթօրէն անոր մօրն մէջ: Այնքան սաստիկ ցաւ կ'ազդեն՝ որ երբեմն նոյն իսկ

ընջիւղներ (giovenchi) կատաղութեան կը մատնուին: Չարչարուող կենդանին հեռուոր տեղեր խուսաբելով՝ այս դժնդակ բոյսի սերմերն կը ցանէ այնպիսի տեղեր՝ որ բնական կերպով այդքան հեռուորութեանց անկարելի պիտի ըլլար հասնիլ:

Հարաւային Աֆրիկէ կը գտնուի Har-



Դիոնէ Ճամճորսակ:

magophyton անուն բոյսը: Ասոր մեծ կակ պտուղները գետնի վրայ տարածուած կը մնան և ունին սայրասուր զարհուրելի յաւելուածային մասեր: Երբ ոչխար մը, կամ եղջերու և կամ ո՛ր և է կենդանի մը այդ ճանկերուն վրայ կոխէ՝ իսկոյն ոտքի կակուղ մասերուն մէջ այնպէս կը մխուին՝ որ խեղճ չորքոտանին՝ կաղն ի կող կը սկսի ցաւէն վազվզել և ջաբաթներով չարչարուիլ և մինչև որ այդ դժնդակ ճիւղաններէն չազատի՝ կենդանին

հանգիստ չի գտներ. և երբեմն այդ վիճակի մէջ՝ թշնամի զագաններու դուրաւ որս կ'ըլլայ: Կը պատմուի յամոյրի մը դէպքը՝ որ ոտքին մէջ՝ սոյն պտուղներէն հատ մը մտած ըլլալով՝ առիծի մը յարձակումէն չի կրնար ազատիլ: Արիւծը իր զոհը լափելու առնն, յիշեալ պտուղին ճանկաւոր պատիճն ալ կոկորդին մէջ կը ներմուծուի և քիմքին ու ծնոտին մէջ կը միութի: Կենդանեաց թագաւորին ամենէն աւելի կատաղի ճիգերն ալ չեն զօրեր՝ բերնէն դուրս արտաքսելու դժողակ բոյսի ստեղծելի տանջող կեռերը: Արիւծը այլևս չի կրնար օրերով կերակուր ուտել՝ մինչև երբ անօթութենէ և ցաւերէ կը մեռնի:

Թէ՛ և Harpagophyton սերմերը սոյն ոճով հեռաւոր տեղեր կը ծաւալին, սակայն ստուգիւ կատարեալ անգութ եղանակ մըն է առ իր զոյւթեան կոտին հաւար:

Կան ուրիշ բոյսեր ալ որոնք կարծես ճշմարիտ վայրագութեան ոգիէ մը շարժեալ՝ իրենց դպչողներուն այնպիսի չարքարանքներ կը պատճառեն՝ որ ո՛ր և է օրինաւոր անձնապաշտպանութեան սկզբունքով չեն կրնար արդարանալ:

Հասարակ եղիճը՝ թէ՛ և անգութ բոյսի օրինակ մ'է՛ քանի որ նոյն իսկ դիպուածով իրեն դպչողին մարմինը կը տաղէ, բայց սակայն հասարակածային երկիրներու մէջ կան այնպիսի եղիճներու տեսակներ՝ որոնց անգթութեան և ահաւորութեան ո՛ր և է ուրիշ բոյսեր չեն կրնար հաւասարիլ:

Himalayan Journalsի մէջ Sir Jo-

seph Hooker հնդկական «Milumma» կոչուող եղիճ մը կը նկարագրէ որուն հասակը 5 մետր բարձր ըլլալով՝ լայն և փայլուն տերէներու վրայ փուշեր կամ մագճղակները թէ՛ և դուրաւ չեն նշմարուիր, բայց ստուգիւ ունին մանրացուցական այնպիսի խայթոցներ՝ որ մարդուս մարմնոյն կ'ազդեն ահաւոր կսկիծներ՝ կարծես հրաշէկ երկաթով տաղուած. յետոյ մարմնոյն ուրիշ կողմերը սաստիկ ցաւեր կը պատահին, բերանի կծկումներ և ուրիշ ջղաձկտումներ տեղի կ'ունենան՝ կատարեալ (պանաթասի) tetanosi երեւոյթներով, թայթուած ենթական՝ երբեմն 8 կամ 9 օր սոյն տանջանքները կը քաշէ:

Անգղիացի գիտնականը շատ դժուարութիւն քաշեր է տեղացի անձ մը գտնելու՝ որ իրեն օգնէր զոնէ նմուշ մը կտրելու այդ եղիճի տեսակէն՝ իր հաւաքածոյին համար:

Ստուգիւ այս տեսակ բոյսերու տուած պատուհասը անհամեմատ դժողակ է՝ քան իրենց կրած փեսար:

Հ. Ն.

ՄԱՐԻՆՈՒԱՆԱ ԲՈՅՍԸ

Միքսիկայի փոռային կը պատկանի «Marihuana» կոչուող սաղայեղական վատ բոյսը: Կը բովանդակէ այնպիսի փառապ (pharmaque) մը՝ որ ափիոնի՝

1. Ափիոնը (opium) շատ տեսակ խաշխաշներէ և մանաւոր ջնարեք խաշխաշ (Papaver somniferum) կը ծորի: Խաշխաշ սերմնափակի տասն զույններուն վրայ դանակով ձեղքեր բանալով՝ իսկոյն կաթնազնէն հիւթ մը կը ծորի՝ որ օղոյ մէջ շուտով կը պնդանայ և ունի դառն համ, ու թունաւոր հոտ: Արեւելք, Պարսկաստան և Նիդերլանտներ քիւրեք խաշխաշ շատ կը մշակեն և զօրաւոր ափիոնի կը պատրաստեն, ու յարստանեն ուրիշ երկրներ, Չինաստան և Եւրոպա կը գրկեն պինդ, թուր, պանաւած և սեպչական նողկացուցիչ հոտով: Կը շինեն զեղաստոր և կտմ շուրի մէջ լոծուած երբ չափաւոր քանակութեամբ զօրձածուի, մարդուս ունեցած նիւթական և բարոյական ցաւերը կը մեղմէ, քաղցը քուժ

կը բերէ և բժշկական լաւ ազդեցութիւն կ'ունենայ, և ընդհանրապէս երբ չափէ ակելի ստամոքսի մէջ ներուածուի զօրաւոր և ստեղծ մանացուցիչ թոյն կ'ըլլայ:

Երածիք է վաղուց, որ Արեւելեան շատ ազգեր և մանաւոր Չինացիք ափիոն շատ կը զօրձանեն տեսակ մը զինովութեան մէջ իշխուլու համար՝ յորում երեակայութեան թաքմանալով, ցանկութիւններն զրոյնելով, երջանիկ երգանքերու մէջ ընդմիջով կը հեռանան:

Ափիոնի, ինչպէս նաև մարիուանայի զիւտաւոր բաղկացուցիչ փառքներն են՝ Մարփին և morphine, խաշխաշ և codéine, թմրեք և narcotine և Միկոնիւն և méconine, ծծմբական և Միկոնական թթուաներու հետ խառն: